ՀԽՍՀ ԳԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
ОБЩЕЕ СОБРАНИЕ АН АРМССР

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը 1989 թ. մայիսի 17-ին ընդունեց հետևյալ նամակը՝ ուղղված Մ. Ս. Գորբաչովին և Ն. Ի. Ռիժկովին.

Генеральному секретарю ЦК КПСС,
Председателю Президиума Верховного Совета СССР

ГОРБАЧЕВУ М. С.

Председателю Совета Министров СССР

РЫЖКОВУ Н. И.

Участники годичного общего собрания Академии наук Армянской ССР, озабоченные тяжелым положением сложившимся в НКАО, обращаются к Вам с просьбой предпринять неотложные меры, направленные на нормализацию вновь чрезвычайно обострившейся напряженной ситуации в области и вокруг нее.

Начиная с февраля 1988 года по сей день, не найден верный путь разрешения конфликта. Ситуация продолжает осложняться и неизвестно какие непредсказуемые последствия она может иметь.

Как известно, справедливое движение трудящихся Нагорного Карабаха является одним из проявлений начатой в стране политики перестройки и демократизации. Оно направлено на устранение исторической несправедливости, против допущенного в прошлом противозаконного отторжения Нагорного Карабаха от Армении. Десятилетиями попирались законные национальные права армянского населения НКАО, велась политика азербайджанизации области, политика, которая в свое время была применена в отношении армянского населения Нахичеванской автономной республики, и привела к полному изгнанию из нее армян. Обстановка резко обострилась после кровавой резни армян, учиненной в г. Сумгаите. Эта резня, вызвавшая всеобщее возмущение в мире, к сожалению еще не получила политической оценки.

Армянское население Нагорного Карабаха и весь армянский народ с пониманием восприняли решение Президиума Верховного Совета СССР о введении в НКАО Особой формы управления, рассматривая это как первый шаг, направленный на выведение области из-под административного подчинения Азербайджана, и окончательного решения проблемы Нагорного Карабаха. Между тем, опыт деятельности Особого комитета показывает, что он, независимо от воли его руководства, оказался неспособным выполнить возложенную на него задачу. И это в условиях, когда Особый комитет был создан за счет ликвидации областных партийных и советских органов. Фактически, руководство Азербайджана продолжает свою прежнюю политику, используя то, что область формально продолжает оставаться в составе Азербайджана. В связи с этим, считаем вполне справедливым открытое письмо от 3 мая 1989 г., направленное партийными и советскими деятелями области Генеральному секретарю ЦК КПСС, Председателю Президиума Верховного Совета СССР Горбачеву М. С., в котором раскрываются причины сложившейся там тяжелой, тревожной обстановки.

В свете всего сказанного представляется возмутительной продолжающаяся в Азербайджане антиармянская кампания, которая направлена против политики перестройки национальных отношений. Характерным проявлением кампании дискредитации Карабахского движения является письмо ряда деятелей Азербайджана от 14 мая 1989 года, направленное Горбачеву М. С., которое основано на фальсификации фактов.

События последних дней, еще и еще раз показали, что есть один единственный путь решения вопроса о Нагорном Карабахе: это его политическое решение.

Руководствуясь ленинским принципом права наций на самоопределение, необходимо незамедлительно вывести Нагорный Карабах из-под административного подчинения Азербайджана. Только в этом случае станет возможным восстановление добрососедских отношений этих двух народов.

Письмо единогласно принято на общем собрании АН Армянской ССР 17 мая 1989 года.

Президент АН Армянской ССР
академик В. А. АМБАРЦУМЯН

Академик-секретарь АН АрмССР
член-корр. АН АрмССР Д. М. СЕДРАКЯН

* * *

1989 թ. մայիսի 17—18-ին տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց ակադեմիական հիմնարկների 1988 թ. գործունեության արդյունքները։ Ներածական խոսքով հանդես եկավ Հայկական ԽՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

Հուզումնալից իրադարձություններով լի 1988 թ., ասաց նա, մեր երկիրը նոր քայլեր կատարեց խորհրդային հասարակության վերափոխման ուղղությամբ։ Վերակառուցումը, դեմոկրատիան և հրապարակայնությունը հնարավոր դարձրին հատկապես հիվանդագին, առավել սուր պրոբլեմների բացահայտ վերհանումն ու քննարկումը, դրանց լուծման ուղիների որոնումը։ Գուսակցության վարած նոր քաղաքականության շնորհիվ ծնունդ առավ ղարաբաղյան համաժողովրդական շարժումը՝ պայքարը ընդդեմ ղարաբաղցիների ազգային և սոցիալական իրավունքների ոտնահարումների, հանուն Արցախի ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքի։ Նա նշեց, որ Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան վճռականապես արտահայտել է իր տեսակետը այդ հարցի վերաբերյալ, անվերապահորեն միանալով Արցախի ժողովրդի պահանջին։

Վ. Համբարձումյանը անդրադարձավ հանրապետությունում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժին, դրա հետևանքների վերացմանը։

Խոսելով գիտության առանձին բնագավառներում ձեռք բերած արդյունքների մասին, պրեզիդենտը նշեց հայ գիտնականների՝ կիրառական կարևոր նշանակություն ունեցող հետազոտությունները, սպասքաշինության ասպարեզում ձեռք բերած զգալի նվաճումները, կենսաբանների, երկրաբանների հաջողությունները։

Անդրադառնալով գիտական հաստատությունների մեջ տեղ գտած թերություններին, Վ. Համբարձումյանը նշեց, որ առաջնահերթ խնդիր է մնում հաշվողական տեխնիկայի միջոցների օգտագործումը գիտական որոնումների բնագավառում և հանրապետության ղեկավարության ուշադրությունը հրավիրեց գիտական սարքավորումների ու գործիքների մատակարարման պլանավորման բարելավման հարցի վրա։

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովում ելույթ ունեցավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանը։ Նա նշեց, որ անհաշիվ զոհեր տարած երկրաշարժի հետևանքները, բնակչության զանգվածային տեղաշարժերը, սասնամյակներով կուտակված սոցիալ-տնտեսական պրոբլեմները, Լեռնային Ղարաբաղում իրադրության դրամատիկ բարդացումը հանրապետությունում ստեղծել են արտակարգ ու լարված իրավիճակ։ Այդ խնդիրները պահանջում են ավանդական լուծումներից բացի փնտրել ու գտնել նաև նոր ուղիներ ու միջոցներ, և այդ հարցում ծանրակշիռ պետք է լինեն գիտությունների ակադեմիայի գործուն օգնությունն ու աջակցությունը։ Նշվեց, որ 1988 թ. առաջին իսկ ամիսներից ազգային ինքնագիտակցության պոռթկումային զարթոնքը ցույց տվեց, որ ազգային հարցին առնչվող յուրաքանչյուր քննարկում, յուրաքանչյուր քայլ պետք է արվի կոնկրետ իրավիճակի խոր և գիտական գնահատման, պատճառահետեանքային կապերի համակողմանի բացահայտման, պատմական անաչառ փաստարկումների հիման վրա։ Անհրաժեշտ է գտնել ազգային պրոբլեմների լուծման համապատասխան մեխանիզմներ, մշակել ազգամիջյան հարաբերությունների վիճելի հարցերի լուծման դեմոկրատական ձևեր։

Անդրադառնալով ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական նվաճումներին, գիտության արագ ու դինամիկ զարգացման ներկա պրոբլեմներին, ընդգծվեց աշխատանքների հստակ կոորդինացման բացակայությունը, մշակումների դանդաղ արմատավորումը, շեշտվեց հանրապետությունում էկոլոգիական իրավիճակի արմատական բարելավման գիտական մշակումների, երկրաշարժաբանական լուրջ ծառայության ստեղծման, կիրառական գիտությունների արագընթաց զարգացման, հանրապետությունում տերիտորիալ տնտեսական հաշվարկի արմատավորման գիտական կոնցեպցիայի մշակման, սոցիալական հոգեբանության, հասարակական կարծիքի լայն ու խոր ուսումնասիրման կազմակերպման հույժ կարևորությունը։

Ս. Գ. Հարությունյանը նշեց պատմագիտության առջև ծառացած խնդիրները։ Պատմագիտությունը կոչված է վերաիմաստավորել անցյալի շատ էջեր, մաքրել դրանք տարբեր շերտանստվածքներից և խեղաթյուրումներից։ Հանրապետության պատմաբաններին հանձնարարված է իրենց հիմնավոր կարծիքը ներկայացնել 1918 թ. մայիսի 28-ի, հայկական պետականության վերականգնման, եռագույն դրոշի տեղի ու դերի, 1930-ական թթ. մեր պատմության սպիտակ էջերի լրացման վերաբերյալ, ընդգծվեց գիտական կադրերի պատրաստման, գիտության նյութատեխնիկական բազայի ամրապնդման, գիտական աշխատողների սոցիալական պայմաննե-

րի բարելավման հարցերի կարևորությունը։ Այնուհետև ընկ. Ս. Գ. Հարությունյանը հույս հայտնեց, որ գիտությունների ակադեմիայի բազմահազարանոց կոլեկտիվը հանրապետության համար դժվար այս ժամանակներում բոլոր ջանքերը կգործադրի Հայաստանում իրադրությունը կայունացնելու և մեր ժողովրդին առաջընթացի նոր բնագիծ դուրս բերելու համար։

ՀԽՍՀ ԳԱ գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց ակադեմիկոս քարտուղար, Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Դ. Սեդրակյանը։ Նա նշեց, որ վերակառուցումը, դեմոկրատիան և հրապարակայնությունը հնարավոր դարձրին հատկապես հիվանդագին, առավել սուր պրոբլեմների վերհանումը, այդ թվում նաև ազգային հարաբերությունների ոլորտում։ Նա ասաց, որ 1921 թ. մայր հայրենիքից արհեստականորեն ու բռնի կերպով, հակասահմանադրական կարգով անջատված, հայ բնակչության բացարձակ մեծամասնություն ունեցող, պատմականորեն Հայաստանի անբաժան մասը հանդիսացող Արցախի ճակատագիրը չի կարող չըհուզել Խորհրդային Հայաստանի բնակչությանը։ Այդ աղաղակող անարդարությունը վերացնելու նշանաբանով 1988 թ. ծավալված պայքարը այնքան է արդարացի ու հիմնավոր, որ ներառել է ժողովրդի ամենալայն զանգվածները։

Ղարաբաղյան շարժման հենց սկզբում ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան քննարկել է հանրապետությունում ստեղծված դրությունը և քաղաքական ճիշտ գնահատական է տվել ինչպես շարժմանը, այնպես էլ Սումգայիթի գազանային ոճրագործությանը։ Այդ կապակցությամբ նախագահությունն իր կարծիքն ուղարկել է ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտե։

Դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը էլ ավելի բարդացրեց դրությունը հանրապետությունում, ասաց Դ. Սեդրակյանը։ Այդ դժվար օրերին մեր կողքին էին խորհրդային և արտասահմանյան շատ գործընկերներ, որոնք անցկացրին կարևոր աշխատանքներ հանրապետության սեյսմիկ վիճակի վերլուծման, աղետի գոտում սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզների նախապատրաստման ուղղությամբ։

Ակադեմիկոս քարտուղարը հատկապես ընդգծեց գիտական հիմնարկների առջև ծառացած նոր, բարդ խնդիրները։ Անհրաժեշտ է դառնում վերանայել Հայաստանի 1991—2010 թթ. գիտատեխնիկական առաջընթացի կոմպլեքս ծրագիրը, առաջնահերթ խնդիրներից համարել սեյսմոլոգիայի հետագա զարգացումը, ժամանակակից սեյսմիկ կայանների ընդարձակ ցանցի ստեղծումը, հանրապետության էկոլոգիական իրավիճակի բարելավումը, հասարակագիտության ներկայացուցիչների ակտիվ ընդգրկումը ժողովրդի առջև ծառացած պրոբլեմների, դրանց հաղթահարման ուղիների, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գիտական արժեքավորման պարզաբանման մեջ։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Հայկական ԽՍՀ ակադեմիկոսներ Վ. Ղազարյանը, Ս. Մերգելյանը, Ա. Պետրոսյանցը, Ա. Բաբայանը, Մ. Ներսիսյանը, Հայկական ԽՍՀ թղթակից անդամներ Վ. Խոշարեկյանը, Յու. Ալեքսանյանը, ակադեմիայի անօրգանական և ընդհանուր քիմիայի ինստիտուտի տնօրեն Ս. Կարախանյանը, Արցախի «Ամարաս» բարեգործական ընկերության տնօրենի տեղակալ Վ. Սարուխանյանը, ՀԽՍՀ դատախազի տեղակալ Հ. Բաղդասարյանը։

Ելույթ ունեցողները խոսեցին Լեռնային Ղարաբաղում իրադրության խիստ սրման, ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման, հանրապետությունում տիրող էկոլոգիական բարդ իրավիճակի մասին, ինչպես նաև հայկական ատոմակայանի փակման մասին։ Նշվեց հանրապետության Բնության պահպանության կոմիտեի միանգամայն անբավարար աշխատանքը էկոլոգիական իրավիճակի բարելավման գործում։

Ժողովի մասնակիցները գիտական հաղորդումներ լսեցին սպիտակյան երկրաշարժի հետ առնչվող մի շարք պրոբլեմների մասին. Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների սեյսմատեկտոնիկան, սեյսմաբանական ուսումնասիրության արդյունքները, երկրաշարժերի մեխանիկան, Սևանա լճի անտրոպոգեն էվտրոֆացումը և նրա բացասական ազդեցության վերացման ուղիները (զեկուցողներ՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Հ. Գաբրիելյան, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամներ Ս. Վ. Գրիգորյան, Ի. Լ. Ներսեսով, երկ-հանք. գիտ. թեկնածու Է. Գ. Գեոդակյան, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ս. Ս. Գրիգորյան, կենս. գիտ. դոկտ. Ռ. Հ. Հովհաննիսյան)։ Ժողովը քննարկեց Խորհրդային Հայաստանի պատմության մի քանի հարցեր (զեկուցող՝ ՀԽՍՀ. ԳԱ. թղթ. անդամ Հ. Ռ. Սիմոնյան)։

Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովի մասնակիցները դիմում հղեցին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մ. Ս. Գորբաչովին և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ի. Ռիժկովին ԼՂԻՄ-ում և նրա շուրջը ծավալված իրադրության սրման կապակցությամբ (տե՛ս էջ 251)։

Ակադեմիայի ժողովը քննարկեց կազմակերպական հարցեր։ Վ. Հ. Համբարձումյանի պրեզիդենտական ժամկետը լրանալու կապակցությամբ ժողովը որոշեց մեկ տարով երկարաձգել նրա պրեզիդենտական լիազորությունները։ Ժողովը ակադեմիայի փոխպրեզիդենտ ընտրեց Հայկական ԽՍՀ ակադեմիայի իսկական անդամ Գ. Խ. Սարգսյանին։

Տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ ԳԱ պարգևների հանձնում։ «Մեծարման գիր», «Վաստակագիր» և «Գովեստագիր» հանձնվեց մի խումբ հայ գիտնականների։

Մայիսի 15-ին և 16-ին տեղի ունեցան գիտությունների ակադեմիայի բաժանմունքների նստաշրջանները։

Է. ԱԱՎԵՐԴՅԱՆ